

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՍՈՒՐԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

Սիրելի՛ կանայք, մայրե՛ր, աղջիկնե՛ր.

Մայրության բերկրանք վայելելու լավագույն մաղթանքով շնորհավորում եմ ձեզ Մայրության և գեղեցկության տոնի առիթով:

Ապրիլի 7-ը՝ Մարիամ Աստվածածնի Ավետման տոնը, որ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու անշարժ տոներից է, կարճ ժամանակում ընդունվեց և սիրելի դարձավ մեր հասարակությանը:

Անառարկելի է՝ մայրության շնորհը, սերնդային հաջորդականությունը մարդկությանը տրված մեծագույն պարգևներից է:

Մեր մայրերի <<որդոց օրոցքին լուսնյակ դառնալով>>, <<տան ճրագ>> ու <<արևից զորեղ>> լինելով՝ <<հինավուրց ու նոր ձեռքերով>> են կերտվում Հայաստանի Հանրապետության սահմաններին կանգնած անվեհեր զինվորի ու շինականի, ուսուցչի ու աշխատավորի ստեղծագործ, հայրենասեր ու անձնագոհ եությունը:

Սյունյաց առաքինի, տոկուն ու նուրբ մայրե՛ր,

մարդ թե հրեշտակ թող որ միայն բարի լուր բերեն ձեր զավակներից, թող ոչ մի գույժ չստվերի ձեր մայրական զգայուն սիրտն ու խաղաղ ժպիտը:

Ձեզ գարուններ, լույս և անսահման ուրախություն եմ մաղթում, թող իրականություն դառնան ձեր օրհնանքները՝ բարիք բերելով ձեր ընտանիքներին և Սյունյաց աշխարհին: